ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կառուցապատողների կողմից Ձև N2-5 տեղեկանքը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի «Մեկ պատուհան» գրասենյակում մուտքագրելու ընթացակարգի մասին

ՀՀ կառավարության կողմից 19.03.2015թ. ընդունված թիվ 596-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 129-րդ կետի համաձայն, կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ՝ Որոշման N5 հավելվածով հաստատված Ձև N2-5 տեղեկանքը, պետք է ներկայացնի (մուտքագրի) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի <<Մեկ պատուհան>> գրասենյակ, իսկ Երևանի քաղաքապետարանը, նշված տեղեկանքը մուտքագրվելուց հետո եռօրյա ժամկետում, դրա մասին իրազեկի ՀՀ քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով կառուցապատողի կողմից ներկայացված հիշյալ տեղեկանքի պատճենը:

Ծանոթություն

Որոշման 133-րդ կետի համաձայն, շինարարության ընթացքում, կառուցապատողը պարտավոր է 5-օրյա ժամկետում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի <<Մեկ պատուհան>> գրասենյակ ներկայացնել Որոշման N5 հավելվածով հաստատված Ձև N2-5 տեղեկանքի տվյալների փոփոխման մասին համապատասխան տեղեկատվություն՝ ըստ Ձև N2-5 տեղեկանքի, որի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանը, նշված տեղեկանքը մուտքագրվելուց հետո եռօրյա ժամկետում, դրա մասին իրազեկում է ՀՀ քաղաքաշինական պետական տեսչությանը՝ կցելով կառուցապատողի կողմից ներկայացված հիշյալ տեղեկանքի պատճենը: